«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ *Սաների մեջ ինքնուրոունության,նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը ոչ ավանդական նկարչության գործընթացում*

Դասատություն՝ *Փարպիի թիվ 11 մանկապարտեզ*

Դաստիարակ՝ Նելլի Գալստյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023թ.

Բովանդակություն

1. Ներածություն 3

Գլուխ 1 4

1.1 Ինչ է նկարչությունը

1.2 Նկարչության տեսակները

1.3 Ոչ ավանդական նկարչության տեսակները

Գլուխ 2.....14

2.1 Գործնական աշխատանք

Եզրակացություն 16

Գրականության ցանկ 17

Ներածություն

Ժամանակակից հասարակություն թելադրում է կրթել ստեղծագործ մարդկանց, ովքեր խնդիրներին ոչ ավանդական տեսակետներ ունեն, ունակ են գտնել իրենց լուծումները, օրիգինալ պատասխանները, բացահայտ արտահայտել իրենց մտքերն և արագ հարմարվել փոփոխվող պայմաններին:

Ստեղծագործությունը խնդիրների լուծման նոր ուղիներ և արտահայտվելու նոր եղանակներ հայտնաբերելու ունակությունն է: Հետևաբար, ստեղծագործական կարողության զարգացումը, ստեղծագործ անհատականության ձևավորումը ժամանակակից նախադպրոցական կրթության հիմնական խնդիրներից : Այս խնդրի լուծման հիմնական ուղիներից մեկը նախադպրոցական տարիքի երեխաների հետ նկարչության դասընթացներում ոչ ավանդական տեխնիկայի օգտագործումն է: <<Ոչ ավանդական>> տերմինը ենթադրում է նյութերի օգտագործում, գործիքներ, նկարչական մեթոդներ, որոնք ընդհանուր առմամբ ընդունված չեն, ավանդական կամ լայնորեն հայտնի չեն:

1.1 Ինչ է նկարչությունը

Նախադպրոցականի համար նկարչությունը նույնքան բնական պահանջմունք է, որքան խաղը: Նկարությունը ոչ միայն փոքրիկի զգացմունքի արտահայտումն է, այլևս միջոց՝ ճանաչելու շրջապատը: Միաժամանակ նկարչությունը կատարում է նաև զարգացնող դեր՝ հարստացնելով և ճշգրտելով երեխաների աշխարհընկալումը:

Նկարչությունը կարելի է դիտել որպես ինքնատիպ խաղ: Դա է պատճառը, որ սովորեցնելով երեխային նկարել, պետք է նրան ոչ թե զրկել ինքնուրույնությունից, այլ նպաստել ազատ և ստեղծագործ աշխարհընկալման ձևավորմանը:

Մինչև նկարել սկսելը երեխան պետք է խաղա նկարվող առարկայով, ձեռքը վերցնի, շոշափի այն, ըմբռնի դրա ամբողջական բնույթը:Այս դեպքում երեխայի պատկերացումներն այնքան հզոր կլինեն, որ նկարիչն անգամ կարող է <<նախանձել>> նրան:

Նկարչության բուն գործընթացը, ինչը, թղթի վրա պատկերելու միջոցով, երեխայի սիրո, հակումների, հույզերի և տրամադրության արտացոլումն է, երեխային ձերբազատում է լարվածությունից և հանդարտություն պարգևում:

1.2Նկարչության տեսակները

Իրականացվում են նկարչության հետևյալ տեսակները՝ առարկայական /բնօրինակից/, դեկորատիվ, թեմատիկ և ստեղծագործական /մտահղացմամբ/:

Առարկայական նկարչության կարևոր առանձնահատկություններից է առարկայի պտկերումը մտավոր ճշտությամբ: Առարկայական նկարչության ուսուցումը հիմնվում է նախնական դիտումների վրա. նպատակն է՝ երեխաների մեջ ձևավորել ճիշտ պատկերացում՝ առարկայի ձևի, կառուցվծքի, գույնի , չափի և այլ հատկանիշների վերաբերյալ: Այսինքն՝ բնօրինակից նկարելը համարվում է դիտողական ուսուցման ձև, որի ժամանակ երեխայի գիտակցության մեջ մտապահվում է առարկայի ձևը, կառուցվածքը և գույնը:

Բնօրինակից նկարչությունը նկարելու ամենաբարդ տեսակն է: Այն հիմնվում է բավարար զարգացած աչքաչափի վրա: Որպես բնօրինակ օգտագործվող նմուշը պետք է տեղադրվի՝ երեխաներին որքան հնարավոր է մոտ,և բնօրինակի վերլուծությունն անցկացվի պարապմունքից առաջ:Խիստ կարևոր է, որ երեխաներն աշխատելուց հետո կարողանան համեմատել իրենց աշխատանքը բնօրինակի հետ, գտնեն դրական կողմերն ու թերությունները:

Թեմատիկ նկարչությունը երեխաներին սովորեցնում է նկարել ոչ թե առարկա, այլ վրձնի և ներկի օգնությամբ ստեծել սյուժետային թեմա /մի քանի առարկաներ, պատկերներ/: Դրա շնորհիվ երեխաները ձեռք են բերում նոր ունակություններ և հմտություններ՝ կողմնորոշվել թղթի վրա, պատկերել մի քանի կերպար և դուրս չգալ թղթի սահմաններից, միաժամանակ օգտվել տարբեր գույներից և այլն: Բնականաբար, այս տարիքում ընտրված թեմաները պետք է լինեն շատ պարզ և անհրաժեշտության դեպքում ունենան նմուշօրինակներ, որոնք, սակայն, նկարելու ընթացքում չպետք է լինեն երեխաների տեսադաշտում:Նկարչության այս եղանակով աշխատելու ժամանակ երեխաներն աստիճանաար սովորում են, որ մոտ կանգնած տնակն ու ծառերն ավելի մեծ են և բարձր, իսկ հեռվում կանգնածները՝ փոքր:

Թեմատիկ նկարչության ժամանակ թեմաները պետք է բխեն երեխաների նախկինում ձեռք բերած գիտելիքներից, տեղեկություններից, ծանոթ հեքիաթներից ու մուլֆիլմերից:

Նույն նպատակը դրվում է նաև ստեղծագործական նկարչության դեպքում, միայն այս պարագայում ավելանում է նաև երեխայի երևակայությունը, ստեղծագործական միտքը:

Նկարչության արվեստը զարմանալի գործընթաց է՝ մի կողմից՝ ստեղծագործական, մյուս կողմից՝ դաստիարակչական: Այն թույլ է տալիս զարգացնել դիտողականությունը, երևակայությունը, ֆանտազիան, ձեռք-աչքի համակարգումը, բացի այդ, ձեռք բերել աշխարհի հատուկ տեսլական և ընկալման բարդություն:

Ծննդյան օրվանից երեխան անընդհատ ձգտում է հասկանալ աշխարհը: Այն ամենն՝ ինչ նա անում է՝ շարժվում է, շփվում խաղում կամ ուտում, նա դա անում է իր ստեղծագործական ձևով: Ստեծագործությունը նրա կյանքի անբաժանելի մասն է: Ամեն անգամ երեխան փնտրում է տեղեկատվություն ստանալու և ինքնադրսևորվելու սեփական, անհատական ձևը: Դրանում նրան օգնում է նկարչությունը: Նկարելով նա ոչ միայն զարգացնում է նուրբ շարժիչ հմտությունները, այլև սովորում է մտածել, վերլուծել, համեմատել շարադրել: Մանկավարժության պատմության մեջ ստեղծագործելու խնդիրը միշտ եղել է ամենահրատապներից մեկը: Բոլոր ժամանակներում անհրաժեշտ են ստեղծագործ անհատներ:Ստեղծագործության գործընթացում երեխան զարգանում է ինելեկտուալ և էմոցիոնալ, որոշում է իր վերաբերմունքը կյանքին և նրա տեղը, ձեռք է բերում կոլեկտիվ փոխգործակցության փորձ և կատարելագործում տարբեր գործիքների և նյութերի հետ աշխատելու հմտություններ:

1.3 Ոչ ավանդական նկարչության տեսակները

Ոչ ավանդական նկարչական տեխնիկայի կիրառումը նպաստում է երեխաների ստեղծագործական ունակությունների զարգացմանը, արթնացնում է երևակայությունը, ակտիվացնում դիտարկումը, ուշադրությունը և երևակայությունը: Որպես կանոն, երեխաները կրկնօրինակում են իրենց առաջարկվող մոդելը, և ոչ ավանդական նկարչական տեխնիկան թույլ է տալիս խուսափել դրանից, պատրաստի մոդելի փոխարեն, ցույց է տալիս միայն, թե ինչպես աշխատել նյութերով և գործիքներով: Սա խթան է տալիս երևակայության, ստեղծագործության զարգացմանը, անկախության դրսևորմանը, նախաձեռնությանը, անհատականության արտահայտմանը: Օգտագործելով և համատեղելով պատկերման տարբեր մեթոդներ մեկ գծագրում՝ նախադպրոցականները սովորում են մտածել, ինքնուրույն որոշել, թե որ տեխնիկան օգտագործել այս կամ այն բանին հասնելու համար:

Ոչ ավանդական նկարչության տեխնիկայի հետ աշխատելը երեխայի մոտ խթանում է դրական մոտիվացիան, ուրախ տրամադրություն է առաջացնում և վերացնում նկարչության գործընթացի հանդեպ վախը: Երեխաները գրաֆիկական հմտություններ և ունակություններ չունեն, ինչը խանգարում է նրանց իրենց ծրագրերն արտահայտել գծանկարներում, ուստի երեխաների նկարները հաճախ անճանաչելի են դառնում, իրականությունից հեռու: Եվ արդյունքում շատ երեխաներ կորցնում են նկարելու ցանկությունը: Երեխային պետք է այն արդյունքը, որը նրան ուրախություն է պատճառում: Ի վերջո շատ կարևոր է, թե ինչ արդյունքների է հասնում երեխան, ինչպես է զարգանում նրա երևակայությունը: Այս առումով անհրաժեշտություն կար հեշտացնել նկարչությունը՝ երեխաների մոտ հաջողության իրավիճակ ստեղծելու համար: Ոչ ավանդական տեխնիկայի կիրառմամբ նկարելու արդյունքը սովորաբար շատ արդյունավետ է և կախված չէ հմտությունից և կարողությունից: Պատկերման ոչ ավանդական մեթոդները բավականին պարզ են տտեխնիկայի մեջ և հիշեցնում են խաղ: Յուրաքանչյուր երեխայի կհետաքրքրի մատներով նկարել, սեփական ափով նկարել, բլոտ դնել թղթի վրա և ստանալ զվարճալի նկար: Ոչ ավանդական նկարչությունը զարգացնում է գեղագիտական ընկալումը, երևակայությունը , ստեղծագործական անկախությունը, երեխաներին հնարավորություն է տալիս օգտագործել հայտնի առարկաները որպես արվեստի նյութ, նախադպրոցականներին թույլ է տալիս զբաղվել նկարչությամբ ոչ թե մոլուցքով, այլ հաճույքով: Սա հնարավորություն երեխաների համար փորձել, փնտրել, փորձարկել և ամենակարևորն է արտահայտվել:

Նախադպրոցականները մեկ գծագրում համադրելով և օգտագործելով պատկերման տարբեր մեթոդներ, սովորում են մտածել և ինքնուրույն որոշել , թե որ տեխնիկան օգտագործել այս կամ այն պատկերն արտահայտիչ դարձնելու համար:

Աշխատանքային համակարգը երեխաների գեղարվեստական ստեղծագործական կարողությունը զարգացնելու համար օգտագործում է ոչ ավանդական մեթոդներ: Ոչ ավանդական նկարչության համար օգտագործվում են տնային գործիքներ՝ բնական և արհեստական նյութերի թափոններ: Այս տեսակը երեխաներին տալիս է շատ դրական հոլյզեր, բացահայտում ծանոթ կենցաղային իրերը որպես բնօրինակ գեղարվեստական նյութեր օգտագործելու հնարավորությունը և զարմանում նրանց իր անկանխատեսելիությամբ:

Ոչ ավանդական նկարչության ձևերից են

Մատնանկարչություն

Հարթ մակերեսով նկարչություն

Սպիտակ թղթի վրա գունաներկված ձեռքերի միջոցով կատարվող նկարչությունն անվանում են մատնանկարչություն:Այս տիպի նկարչությամբ զբաղվելու ընթացքում ակտիվ են երեխայի երկու ձեռքերը:Կարող են նկարել աջ կամ ձախ ձեռքով,երկու ձեռքով,ձեռքի ափերով մատներով:Աշխատաձևի այս տեսակի նպատակն է զարգացնել հետաքրքրասիրություն մատների և ներկերի միջոցով ստեղծվող պատկերների նկատմամբ:
Ձեռքերով նկարելու գործելակերպը,ի տարբերություն վրձնով նկարելու,երեխաներին տալիս է բազմաբովանդակ
հնարավորություններ:Գունավորված մատներով նկարելու ընթացքում երեխան ապրում է մեծ ուրախություն, ցնծություն,հրճվանք:Նա ազատ է իր շարժումների,ստացվող պատկերների,հարվածների,քսվածքների,գծերի ուղղությունների ընտրության մեջ:Հետևաբար երեխային դեռ վաղ տարիքից պետք է հնարավորություն տալ աշխատելու այսպիսի տեխնիկայով:Դա նպաստում է,որ երեխան շոշոփի և ավելի լավ զգա ներկանյութը,դրա գույնը, փափկությունը:Երբեմն էլ փորձում հոտ քաշել:Այս դեպքում ակտիվ վիճակում են նրա բոլոր զգայարանները,և դրանց շնորհիվ նա ծանոթանում է ներկանյութերի
հատկություններին:Երեխան գունավորված մատներով աշխատելու ընթացքում ճանաչում է գույները և իր համար բացահայտում դրանցով ստացվող նոր գուներանգները :

Գործողությունների այս ձևը թույլ է տալիս

1. արթնացնել երեխայի հետաքրքրությունը ստեղծվող պատկերների նկատմամբ,

2. զարգացնել ձեռքի մանր մկանները,

3. հղկել ձեռքի շարժումները ։

Նկարչութիուն դրոշմելով

Հարթ մակերեսով նկարչություն

Դրոշմով նկարչությունը բավականին հետաքրքիր և ուրախ գործընթաց է։Երեխան կարող է աշխատել տարբեր նյութերից(խցան,կարտոֆիլ,ճմռթված թուղթ և այլն)պատրաստված դրոշմներով։

Դրանք կարող են ունենալ կանոնավոր և անկանոն տեսք ,երկրաչափական և բուսական տեսք, փորվածքներ,կտրվածքներ։Եթե դրոշմը փոքր է,ապա նպատակահարմար է դոանց ամրացնել ուղղահայաց դիրքով փոքրիկ փայտիկներ։

Դրոշմը կարելի է գունավորել երկու եղանակով

1. դրոշմը սեղմել գուաշով ներծծված սպունգի վրա։
2. նախընտրած գույնը վրձնով քսել դրոշմող կողմի մակերեսին։ **Առաջինի** դեպքում փայտիկի օգնությամբ դրոշմը իջեցնել ներկամանի մեջ դրված գուաշով ներծծված սպունգե բարձիկի վրա, այնուհետև տեղափոխել թղթի վրա,և թույլ սեղմումով դրոշմել այնպես,որ թղթի վրա երևա գունավոր հետք։

Երկրորդի դեպքում ձախ ձեռքով պահել փայտիկը,որի վրա արդեն ամրացված է դրոշմը,իսկ աջով վրձինը։

Վրձնով վերցնում են գունաներկը և հավասարաչափ քսում են դրոշմի դրոշմվող մակերեսին, այնուհետև դրոշմել թղթի վրա։Դրոշմելու ընթացքում պետք է հետևել երեխաների ինքնուրույն կոկիկ,և հանգիստ աշխատելուն։

Նկարչություն ներկակաթիլներով

Ներկակաթիլներով նկարչությունը մի յուրօրինակ նկարչության տեսակ է որի հիմքում ընկած է թղթի վրա գունաներկ կաթեցնելը։Առաջին ծանոթությունը այս տեխնիկայի հետ կարելի է կազմակերպել խաղային ձևով։Երեխան թղթի վրա կաթեցնում է մի քանի նկար ջրաներկ,ապա ձողիկի օգնությամբ կաթիլները փչում է տարբեր ուղղություններով ,որի շնորհիվ թղթի վրա առաջանում են տարբեր ուղղություններով գծային և գունյին հետագծեր։

Ներկակաթիլներով նկարչության շնորհիվ երեխաները

1. ծանոթանում են փչելով նկարչության տեխնիկային,սովորում են գունավոր պատկերներ ստանալ մի քանի ներկակաթիլների միջոցով ,

2. զարգանում է դիտողականությունը,ուշադրությունը,երևակայությունը, 3. ընդլայնվում են պատկերացումները առարկաների և երևույթների ձևագոյացման վերաբերյալ ։





Նկարչություն թելերով

Ներկակաթիլային նկարչության գունավորած թելերով աշխատանքները պահանջում են առանձնահատուկ մոտեցումներ ։

Ներկակաթիկային նկարչության համար անհրաժեշտ են թելեր ,գունաներկեր,հաստ վրձին,մկրատ,սպիտակ թուղթ։
Նկարչության համար կարելի է օգտագործել տարբեր հաստության թելեր։ Վրձնի օգնությամբ գունավորում ենք թելերը ապա դնելով թղթի վրա ծայրերը դեպի դուրս ,վրան ենք դնում երկրորդ թուղթը և ձեռքի ափով հարթեցնելով դանդաղ քաշում ենք դրանք ։

Նկարչություն ավազով

Հարթաքանդակային նկարչություն
Ավազով նկարչությունը երեխաների համար համարվում է ամենահետաքրքիր գործունեության տեսակներից մեկը։

Ավազով նկարչության համար հարկավոր է մանր ավազով արկղիկ,նախշակաղապարներ ,փայտիկներ։

Երեխաները սիրով խաղում են ավազով։
Նրանք մաղում են այն , հարթեցնում,դրոշմում նախշակաղապարներով երկրաչափական , բուսական պատկերներ, կենդանիների և թռչունների ֆիգուռներ։

Ավազի վրա նկարչության գործընթացի նպատակն է
1. խթանել երեխայի ստեղծագործական երևակայությունը ,
2. զարգացնել ձեռքի համարձակ շարժումները,
3. ակտիվացնել տարածական մտածողությունը,
4. ընդլայնել պատկերացումները ավազի հատկությունների վերաբերյալ

Նկարչություն աղով

Ոչ հարթ մակերեսով նկարչություն

Աղով նկարչությունը բավականին հետաքրքիր աշխատանք է:

Նրանով պատրաստված աշխատանքներն ունեն առանձնահատուկ տեսք : Աղով աշխատելու ընթացքում երեխաները ծանոթանում են մանր և խոշոր աղի հատկություններին ,խթանվում է հետաքրքրասիրությունը , երևակայությունը: Աղով աշխատանքները կազմակերպելու ընթացքում կենտրոնանում է ուշադրությունը , դաստիարակվում է կոկիկ և համբերատար աշխատելու կարողությունը:

Աղով աշխատելու համար անհրաժեշտ են

1. սպիտակ կամ գունավոր թղթեր
2. գուաշ
3. բամբակե բարձիկներ կամ վրձիններ
4. խոշոր կամ մանր աղ
5. սոսինձ
6. անձեռոցիկ

7. նմուշօրինակ

Նկարչություն խմորի վրա

Հարթաքանդակային նկարչություն

Խմորը այն պլաստիկ նյութն է, որով կարելի է ծեփել,գունավորել,դրոշմել, դրվագել դեկորատիվ նյութերով : Խմորի վրա նկարելու ձևերը

Նախապես պատաստված խմորի չորանալուց արդեն կարելի է նկարել: Նկարելու և գունավորելու համար նպատակահարմար է օգտագործել , ակվարել, գուաշ, վրձին,փորձաթուցթ,չոր և խոնավ լաթեր: Ստանալով խմորե հարթության վրա գունավոր զարդանախշեր երեխան հանդես է գալիս ստեղծագործողի դերում :

Ոչ ավանդական նկարչություն

Գոյություն ունեն նկարչության տարբեր տեսակներ, որոնք կարող են հետաքրքրություն առաջացնել երեխաների մեջ: Դաստիարակի խնդիրն է սեր առաջացնել նկարչության հանդեպ:

2.1 Գործնական աշխատանք

2.1 Գործնական աշխատանք

Թեմա՝ Ձմեռային ծառ

Խումբ-ավագ

Տևողությունը 25-30 րոպե

Նպատակը՝

1. Զարգացնել երեխաների ինքնուրույնությունը ,
նախաձեռնողականությունը

2. Նպաստել երևակայության զարգացմանը

3. Զարգացնել մանր մոտորիկանշ

Անհրաժեշտ նյութեր՝

Աշխատատեղ

գոգնոցներ ալյուր

ականջի փայտեր

Ընթացքը

Նախապես զբոսնել բակում , զրուցել տարվա եղանակի ,եղանակային փոփոխությունների մասին։

Դիտել ձմեային ծառը , ուսումնասիրել այն։ Պարապմունքը սկսել ադի-
բուդի մեթոդով

հարցնել , թե ինչ գիտեն ձմռան մասին , որոնք են ձմռան ամիսները ,ինչ տեսք ունեն ծառերը ձմռանը , ինչ է տեղում տարվա այս եղանակին։

Ընդհանրացնել երեխաների պատասխանները , ապա հարցնել.
– ուզում եք նկարել ձմեռային ծառ
– ինչպես նկարենք
– այսօր նկարելու ենք մի հետաքրքիր մեթոդով . հիմա ձեռքերը դրեք սեղանին ։
Ցանել ալյուրը , ապա առաջարկել զգուշությամբ բարձրացնել ձեռքերը։
Հանձնարարել ականջի փայտերը տեղադրել պատկերված ծառի վրա։ Առաջարկել երեխաներին ականջի փայտերի օգնությամբ ստանալ ձյան փաթիլներ։

Վերջում հիանալ իրենց կատարած աշխատանքներով , միասին ընտրել ամենակոկիկ աշխատանքը ։

Որպես ամփոփում սովորեցնել հետևյալ քառատողը .

Ծառը մերկացավ

Զրկվեց տերևից

Ձյունի փաթիլներ

Իջան վերևից։

– Տեսնում եք երեխաներ դուք կարողացաք նակրել բանաստեղծությունը։

Եզրակացություն

Այս աշխատանքի տեսական նշանակությունը կայանում է երեխաների ստեղծագործական կարողությունների զարգացման բնութագրերի որոշման և ոչ ավանդական տեխնիկայի օգտագործման հնարավորությունների բացահայտման մեջ որպես ստեղծագործական կարողությունների զարգացման միջոց ։

Բոլոր երեխաները սիրում են նկարել և նախադպրոցական տարիքը բարենպաստ շրջան է նախադպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման համար ։

Ստեղծագործությունը նրանց համար մտավոր աշխատանքի արտացոլումն է ։

Նախադպրոցական հաստատություններում հիմնական նկարչության ձևը ավանդական նկարչությունն է մատիտով և վրձինով ։

Քանի որ ոչ ավանդական նկարչությունը երեխաների համար ավելի հետաքրքիր է, նրանք ավելի ինքնուրույն և նախաձեռնողական են դառնում

,այդ պատճառով անդրադարձա հենց այս թեմային ։

Գրականության ցանկ

1.Լ.Սմբատյան,Լ.Սարգսյան - Կերպարվեստի պարապմունքների կազմակերպումը մանկապարտեզի միջին խմբում/ուսումնամեթոդական ձեռնարկ/

2. Ժ.Ավետիսյան,Գ.Փոթիկյան - Ոչ ավանդական նկարչություն/ուսումնաօժանդակ ձեռնարկ